

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20/2

26 մայիսի 2015 թ.

Քննարկվեց «Շեն Հոլդինգ» ՓԲԸ 13.05.2015 թ-ի թիվ 13/05-01 գրությամբ բերված պահանջը ՀՀ հարկային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումարները որպես մաքսային մարմին վճարված ԱԱՀ-ի գումարներ համարելու վերաբերյալ:

«Շեն Հոլդինգ» ՓԲԸ բերված փաստարկները.

«Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի կողմից (այսուհետ նաև Ընկերություն) 2013-2014 թ-ի ընթացքում ՀՀ տարածք է ներմուծվել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածով սահմանված ծածկագրին դասվող նյութեր (կավճափոշի բնական, ակրոնալ, պոտաշ, ավազ կվարցային):

Ընկերությունը ներմուծված ապրանքների գերակշիռ մասը օգտագործել է արտադրության պրոցեսում, իսկ չնչին մասը իրացրել է: Արտադրանքն իրացվել է թե ՀՀ տարածքում և թե ՀՀ տարածքից դուրս: ՀՀ տարածքում իրացված արտադրանքի մասով առաջացել է բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարներ, որոնք ընկերության կողմից վճարվել են 2013 թ-ի ընթացքում 15.770 հազար դրամ, իսկ 2014 թ-ի ընթացքում՝ 7.500 հազար դրամ:

Նշվածից հետևում է, որ ընկերությունը մինչև ԱԱՀ-ի հետաձգման ժամկետի լրանալը ՀՀ տարածքում իրացրած արտադրանքի մասով առաջացած ԱԱՀ-ի գումարները վճարել է պետական բյուջե, սակայն մաքսային մարմիններին վճարելու փոխարեն, դրանք վճարվել են հարկային մարմիններին: Այսինքն, եթե այդ գումարները վճարվեին մաքսային մարմիններին, ապա համապատասխան ժամանակաշրջանների ԱԱՀ-ի հաշվարկներում կներառվեին հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների մեջ և այդ մասով հարկային մարմիններին վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները կնվազեին նույն գումարի չափով:

Ելնելով վերը շարադրվածից՝ ընկերությունը խնդրում է 23.270 հազար դրամ հարկային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումարը համարել որպես մաքսային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումար:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի կողմից 2013-2014 թ-ի ընթացքում ՀՀ տարածք է ներմուծվել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածով սահմանված ծածկագրին դասվող ապրանքներ, որոնց գերակշիռ մասը օգտագործվել է արտադրության պրոցեսում, իսկ չնչին մասը իրացրվել է: Արտադրանքն իրացվել է թե ՀՀ տարածքում և թե ՀՀ տարածքից դուրս:

ՀՀ տարածքում իրացված արտադրանքի մասով առաջացել է բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարներ, որոնք ընկերության կողմից վճարվել են 2013 թ-ի

ընթացքում 15.770 հազար դրամ, իսկ 2014 թ-ի ընթացքում՝ 7.500 հազար դրամ: Ընդ որում, մինչև ԱԱՀ-ի հետաձգման ժամկետի լրանալը ՀՀ տարածքում իրացված արտադրանքի մասով առաջացած ԱԱՀ-ի գումարները մաքսային մարմիններին վճարվելու փոխարեն վճարվել են հարկային մարմիններին:

Ընկերությունը խնդրում է հարկային մարմիններին վճարված 23.270 հազար դրամ ԱԱՀ-ի գումարը համարել որպես մաքսային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի մինչև 2013 թ-ը գործող խմբագրության համաձայն նույն հոդվածով սահմանված կարգով ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգմամբ ՀՀ ներմուծված ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները վճարվում էին պետական բյուջե: Սակայն նույն հոդվածի 2013 թ-ից գործող խմբագրությամբ հստակ սահմանվել է, որ մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները պետք է վճարվեն որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ:

Այսպես, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի 2013 թ-ից գործող խմբագրության համաձայն՝ սույն մասով սահմանված ժամկետում ԱԱՀ-ի գումարները չվճարվելու դեպքում օրենքով սահմանված տույժերի հաշվարկումը, իսկ հարկ վճարողի կողմից տույժերը հաշվարկված լինելու դեպքում՝ դրա նկատմամբ հսկողությունն իրականացնում է հարկային մարմինը: Մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները վճարվում են որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ, իսկ սահմանված ժամկետում չվճարված գումարների նկատմամբ հաշվարկված տույժերը վճարվում են որպես հարկային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված ծածկագրին դասվող ապրանքների համար մաքսային մարմինների կողմից հաշվարկված, սակայն հարկային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումարները չեն կարող դիտվել որպես մաքսային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումարներ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

«Շեն Հոլդինգ» ՓԲԸ 13.05.2015 թ-ի թիվ 13/05-01 գրությամբ բերված պահանջը՝ ՀՀ հարկային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումարները որպես մաքսային մարմիններին վճարված ԱԱՀ-ի գումարներ համարելու վերաբերյալ, մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



ՎԱՐԿՐՈՒՄՅԱՆ